ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 05 » Օգոստոսի 2022 թ. N 103-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 126-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով հասարակական դիտորդական խմբի 04.07.2022 թ. արձանագրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի «Հասարակական դիտորդական խմբի անհատական կազմը հաստատելու մասին» N 126-Ա/1 հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 10-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «10. Ստելլա Չանդիրյան - «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ»:

1. Մամուլի քարտուղարին՝ սույն հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ապահովել հրամանի տրամադրումը նախարարության ենթակայությամբ գործող երեխաներին, տարեցներին և

ՀՀ, Երևան 0010, Կառավարական տուն 3, հեռ.՝ (+374 10) 520 830, www.mlsa.am, info@mlsa.am

հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

2. Գլխավոր քարտուղարին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում հասարակական դիտորդական խմբի նոր անդամին ապահովել համապատասխան վկայականով:

8/5/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ